իրանց հնչուն ձայնով: Մէկը պոռում է. «ի կորի՛-կորի՛» (սառուց). նրա ետեւից լրագիր ծախողը –«չեմնա՛յ, չեմնա՛յ»: «Ջա, չա» (թէյ), աղաղակում է երրորդը: Եւ բոլորը վազում են իրար անցած, արագ ու աղմկելով: Բայց այդտեղ էլ դուրս է ցայտում նրանց դէպի ներդաշնակութիւնն ու գեղեցկութիւնն ունեցած հակումը: Իրար չեն ընդհատում երբէք, չեն պոռում բոլորը միասին, այլ կանչում են իրար ետեւից, այնպէս որ ինքնօրինակ մի եղանակ է ստացւում, որ ոչ-բոլորովին զուրկ է գրաւչութիւնից:

Վագոնում իսկոյն որոշւում են եւրոպացիք, որոնք յայտնի են իրանց դէպի կինն ունեցած թեթեւ ու անզուսպ վերաբերմունքով, մանաւանդ այստեղ, մտածելով, որ եւրոպացուն ամեն ինչ թույլատրելի է Արեւելքում: Յաճախ նրանք ներս են խուժում վագոն կիսահարբած, խօսում են բարձր ու հրհռում, ու մարդ ակամայ իր փեշերը հաւաքելով կրթւած եւրոպացու կողքից կուչ է գալիս դէպի անկիրթ ասիացին, որ հանգիստ ու զգաստ նստած է իր տեղը, ո՛չ հայեացքով, ոչ էլ խօսքով որեւէ մէկին նեղացնելով: